ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 51-Ա/Ք 21 « 01 » 2013 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշման 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում կատարվող փոփոխությունների լիազորությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳ նախարարի
«21» հունվարի 2013 թ.
N 51-Ա/Ք հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն կազմակերպում է բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների ու ճարտարագիտության և տեխնոլոգիաների բնագավառներում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ գրանցվելով grants.scs.am հասցեում, մինչև 2013 թվականի մարտի 3-ը ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 24:00):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում (www.scs.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳ նախարարի
«21» հունվարի 2013 թ.
N 51-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի (այսուհետև՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետև՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հունվարի 21-ի N 51-Ա/Ք հրամանի:

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների ու ճարտարագիտության և տեխնոլոգիաների բնագավառների մասնագիտություններով (հավելված N 1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 (երկու) տարի տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետև՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին:

1. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

1.1. Առնվազն 3 անձից բաղկացած Խմբի անդամներից մեկը կարող է հանդիսանալ արտասահմանցի խորհրդատու (այսուհետև՝ Խորհրդատու).

- Խմբի ղեկավար, Խորհրդատու, 1 կատարող – 3 անձից բաղկացած Խմբի համար,
- Խմբի ղեկավար, Խորհրդատու, 2 կատարող – 4 անձից բաղկացած Խմբի համար,
- Խմբի ղեկավար, Խորհրդատու, 3 կատարող – 5 անձից բաղկացած Խմբի համար:

1.2. Խմբի բոլոր անդամները, բացառությամբ Խորհրդատուի, պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

1.3. Խմբի ղեկավար կարող է հանդիսանալ.

- գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված,

- գիտական աստիճան չունեցող անձը, ով ունի առնվազն տասը տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին տասը տարիների ընթացքում ունի հրատարակված հոդվածներ այն ամսագրերում, որոնց գումարային ազդեցության գործակիցը (impact factor) առնվազն 30 է:

1.4. Խմբի ղեկավար չի կարող հանդիսանալ այն անձը, ով գտնվում է Խմբի անդամներից մեկի վարչական ենթակայության տակ:

1.5. Խորհրդատու կարող է հանդիսանալ օտարերկրյա պետության գիտական կազմակերպության հիմնական աշխատակիցը, ով վերջին տասը տարիների ընթացքում ունի հրատարակված հոդվածներ այն ամսագրերում, որոնց գումարային ազդեցության գործակիցը առնվազն 50 է և դրամաշնորհի իրականացման ժամանակահատվածում, տարեկան կտրվածքով, առնվազն 15 օր կգտնվի Հայաստանի Հանրապետությունում:

1.6.Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը և Խորհրդատուն) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

1.7. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող, կամ ասպիրանտ, կամ ուսանող (մագիստրոս, բակալավրիատի երրորդ կամ չորրորդ տարվա ուսուցման ուսանող):

1.8. Խմբում չեն կարող ընդգրկվել գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012» մրցույթի շնորհառուները:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Մրցույթին ներկայացնելով հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև գիտական թեմայի իրականացման մասին հաշվետվություն (այսուհետև՝ Հաշվետվություն), Խմբի ղեկավարը պետք է գործի 2006 թ. հունիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-142) սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

2.2 Պարտադիր պայման է Կոմիտեի կողմից ֆինանսական աջակցությամբ իրականացված հետազոտության արդյունքների հրապարակումը գիտական բաց պարբերականներում և

ամսագրերում: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս պարտադիր պետք է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին՝ նշելով գիտական թեմայի ծածկագիրը, օրինակ.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS _____ գիտական թեմայի շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА в рамках научного проекта № SCS _____.

- This work was supprted by State Committee Science MES RA, in frame of the research project № SCS _____ .

2.3 Պարտադիր պայման է Խմբի ղեկավարի համաձայնությունը՝ ֆինանսավորման երաշխավորված Հայտի և Հաշվետվության անոտացիաների տպագիր կամ էլեկտրոնային եղանակով Կոմիտեի կողմից հրապարակման համար:

2.4 Արգելվում է ՝

- միևնույն գիտական թեմայի նախագիծը ներկայացնել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթների,
- Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթի արդեն իսկ ներկայացված նախագիծը կամ ֆինանսավորման երաշխավորված գիտական թեման ներկայացնել սույն Մրցույթին:

2.5 Հայտը չի քննարկվում, եթե՝

- վերնագրով և բովանդակությամբ ամբողջովին համընկնում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող (ֆինանսավորված) որևէ գիտական թեմայի կամ ծրագրի վերնագրի և բովանդակության հետ,
- նախկինում նույն ղեկավարի կողմից գիտական թեմայի իրականացման վերաբերյալ Հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ գիտական փորձաքննություն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն:

2.6 ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմայի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և գիտական թեմայի ղեկավարի միջև:

2.7 Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմայի ղեկավարի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ 2.6. կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

3. Հայտերի լրացման կարգը և ներկայացումը

3.1. Հայտը ներկայացնել համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ գրանցվելով grants.scs.am հասցեում, մինչև 2013 թվականի մարտի 3-ը ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 24:00):

3.2. Հայտը ներկայացնել գիտական թեմայի տեսքով՝ սույն հրավերի հավելված N 1-ում նշված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների մասնագիտություններին ու հավելված N 2-ի ձևերին համապատասխան:

3.3. Հայտի տեքստային մասը ներկայացնել 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով:

3.4. Հավելված N 2-ի «Ձև 1»-ը (Տիտղոսաթերթ), «Ձև 6»-ը (Հայտի ֆինանսական նախահաշիվ), գիտական թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի դրական կամ բացասական երաշխավորությունը (անհատական նախաձեռնությամբ ներկայացված Հայտի դեպքում՝ ղեկավարի անձնագրի պատճենը), Խմբի մինչև 35 տարեկան անդամի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը տպագիր տարբերակներով, սոսնձված ծրարով, Խմբի ղեկավարի դիմումով (հավելված N 3), անձամբ ներկայացնել Կոմիտե (աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00, քաղաք Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ)՝ Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում:

4. Հայտերի գիտական փորձաքննություն

4.1 Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհուրդներին՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

4.2 Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է Հայտի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում Խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը գիտական թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ֆինանսական արդյունավետությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

4.3 Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ), հետևյալ սանդղակով.

0 միավոր – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

1 միավոր – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

2 միավոր – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

3 միավոր – հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են,

4 միավոր – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

5 միավոր – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

4.4 Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 85 տոկոսը:

4.5 Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է Խորհրդի կողմից: Խորհրդի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 15 տոկոսը:

4.6 Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

4.7 Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

4.8 Գիտական փորձաքննությունը կազմակերպող և իրականացնող անձանց կողմից Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը արգելվում է:

4.9 Հայտերի գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի համար, Հայտերի գիտական

փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհուրդ՝ քննարկման:

4.10 Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

4.11 Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է գիտական թեմաների ցանկն ու դրանց ղեկավարների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:

4.12 Կոմիտեն, գիտական կազմակերպության ղեկավարի միջոցով, տվյալ կազմակերպությունից ներկայացված Հայտերի ղեկավարներին է տրամադրում Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի շեմային գնահատականը: Եթե Հայտը ներկայացվել է անհատական նախաձեռնությամբ, ապա վերջիններս տրամադրվում են Խմբի ղեկավարին:

5. Մրցույթի արդյունքների բողոքարկում

5.1. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Խմբի ղեկավարի կողմից՝ տեղեկանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում Կոմիտե գրավոր դիմում ներկայացնելով:

5.2. Բողոքարկման դեպքում Հայտը տրվում է մեկ փորձագետի՝ կրկնակի գիտական փորձաքննության: Բողոքարկման արդյունքում տրվում է նոր վերջնական գնահատական. վերջին փորձագետի գնահատականի և դրան մոտ սկզբնական գիտական փորձաքննության գնահատականի միջին թվաբանականը:

5.3. Բողոքարկման արդյունքում գիտական թեման երաշխավորվում է ֆինանսավորման, եթե դրա նոր վերջնական գնահատականը գերազանցում է կամ հավասար է գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության համար սահմանված շեմային գնահատականին:

5.4. Եթե բողոքարկման արդյունքում գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի շեմային գնահատականը հաղթահարել են ավելի շատ Հայտեր, քան հնարավոր է ֆինանսավորել, ապա Խորհուրդը կազմակերպում է այցելություն գիտական կազմակերպություն, որտեղ իրականացվելու է գիտական թեման, տեղում ծանոթանում գիտական թեմայի կատարման

համար անհրաժեշտ պայմանների առկայությանը, որից հետո միայն տալիս է առաջարկություն՝ Հայտը ֆինանսավորվող գիտական թեմաների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

5.5. Հայտի կրկնակի գիտական փորձաքննության հիման վրա Կոմիտեի նախագահի որոշումը վերջնական է: Դրա մասին սահմանված կարգով տեղեկացվում են բողոքարկված Հայտերի ղեկավարները:

6. Ֆինանսական և այլ պայմաններ

6.1.Մրցույթի արդյունքները ամբողջությամբ կամփոփվեն 2013 թվականի հունիսին 20-ին:

6.2. Գիտական թեմայի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները 5; 4; 3 և 2 անձից բաղկացած Խմբերի համար կկազմեն համապատասխանաբար՝

- 8000,0 հազար, 6400,0 հազար, 4800,0 հազար և 3200,0 հազար ՀՀ դրամ՝ փորձարարական բնույթի թեմաների համար,
- 7500,0 հազար, 6000,0 հազար, 4500,0 հազար և 3000,0 հազար ՀՀ դրամ՝ տեսական բնույթի թեմաների համար:

6.3. Ֆինանսական նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 100,0 հազար ՀՀ դրամ:

6.4. Խորհրդատուի համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

6.5. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի.

-
  - 6000,0 հազար ՀՀ դրամը՝ 5 անձից բաղկացած Խմբի համար,
  - 4800,0 հազար ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած Խմբի համար,
  - 3600,0 հազար ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած Խմբի համար,
  - 2400,0 հազար ՀՀ դրամը՝ 2 անձից բաղկացած համար,

եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդատու,

-
  - 4800,0 հազար ՀՀ դրամը՝ 5 անձից բաղկացած Խմբի համար,
  - 3600,0 հազար ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած Խմբի համար,
  - 2400,0 հազար ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած Խմբի համար,

եթե Խմբում նախատեսված է Խորհրդատու:

6.6. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող

այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ:

6.7. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի գիտական թեմայի տարեկան ֆինանսավորման ընդհանուր գումարի 10 տոկոսը՝ փորձարարական բնույթի թեմաների համար, 15 տոկոսը՝ տեսական բնույթի թեմաների համար: Եթե Խմբում նախատեսված է Խորհրդատու, վերոնշյալ գումարներին կարելի է ավելացնել առավելագույնը 1200,0 հազար ՀՀ դրամ (տարեկան կտրվածքով)՝ Խորհրդատուի Հայաստանի Հանրապետություն գործուղման ծախսերը հոգալու համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողության գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկել ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (տարեկան կտրվածքով):

6.8. Փորձարարական բնույթի թեմաների համար ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել նաև ենթապայմանագրային համագործակցություն. տվյալ գիտական թեմայի իրականացման համար որոշակի գումար կարող է հատկացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ենթապայմանագրային համագործակցության դեպքում Խմբի ղեկավարը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ պետք է կնքի պայմանագիր և այն համաձայնեցնի Կոմիտեի հետ: Ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար ներկայացնել առանձին հիմնավորում:

6.9. Ֆինանսական նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված թեմայի ֆինանսավորման տոկոսը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում գիտական թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն գիտական թեմայի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված տարեկան գումարի 7 տոկոսը:

6.10. Ֆինանսական նախահաշիվը ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով հետևյալ համամասնությունը.

- 01.07.2013 թ. – 30.12.2013 թ. համար՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 50 տոկոսը,

- 01.01.2014 թ. – 30.12.2014 թ. համար՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարը,

- 01.01.2015 թ. – 30.06.2015 թ. համար՝ դրամաշնորհի տարեկան ընդհանուր գումարի 50 տոկոսը:

Հավելված N1
գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

THE FIELD AND SPECIALTIES OF SCIENTIFIC AND SCIENTIFIC-TECHNICAL ACTIVITY

1. NATURAL SCIENCES

1.1. Mathematics

1.2. Informatics and Computer sciences

1.3. Physics and Astronomy

1.4. Chemistry

1.5. Earth and Related Environmental Sciences

1.6. Biological Sciences

1.7. Other natural sciences

2. ENGINEERING AND TECHNOLOGY

2.1. Civil Engineering and Architecture

2.2. Electrical Engineering, Electronics, Energy, Computer and Information Technology

2.3. Mechanics

2.4. Science of Machines and Mechanical Engineering

2.5. Chemical Engineering

2.6. Materials Engineering

2.7. Medical Engineering

2.8. Ecology

2.9. Biotechnology

2.10. Nanotechnology

2.11. Other Engineering and Technologies

3. MEDICAL SCIENCES

3.1. Basic Medical Sciences

3.2. Clinical Medicine

3.3. Medical Biotechnology

3.4. Other Medical Sciences

4. AGRICULTURAL SCIENCES

4.1. Animal Husbandry and Veterinary Sciences

4.2. Plant Breeding

4.3. Soil Science, Agro chemistry, Plant Protection

4.4. Agricultural Biotechnologies

4.5. Other Agricultural Sciences

Հավելված N2
գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2013 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

Ձև 1

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ[1]

1. Հայտի
   - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն) _____
   - բնագավառը _____
   - մասնագիտական դասիչը _____
   - բնույթը

     տեսական ☐

     փորձարարական ☐
2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն և անգլերեն) _____
3. Հայտի ղեկավարի
   - ազգանունը անունը հայրանունը _____
   - ծննդյան թիվը _____
   - գիտական աստիճանը _____
   - պաշտոնը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Գերատեսչությունը _____
5. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպաիրավական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն) _____
6. Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն _____
7. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս
8. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը և խորհրդատուն՝ եթե նախատեսված է) անդամների թիվը _____
9. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ
10. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

[1] Ներկայացվում է և՛ առցանց, և՛ տպագիր (ստորագրված) տարբերակով:

11. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

12. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

13. Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

«____» _____ 2013 թ.

Form 1a

COVER PAGE[2]

1. Project Title _____

   - Field of Science _____

   - Type of Research:

Theoretical	
Experimental	

2. Key Words _____

3. Principle Investigator (Name, Surname) _____

4. Organization (Full name) _____

[2] Ներկայացվում է միայն առցանց:

Ձև 2

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ[3]

[3] Ներկայացվում է միայն առցանց, հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ յուրաքանչյուրը 100 բառից ոչ ավելի:

Ձև 3

ՆԱԽԱԳԻԾ[4]

[4] Ներկայացվում է միայն առցանց, մինչև 4 Mb ծավալով՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

Form 3a

PROJECT PROPOSAL[5]

[5] Ներկայացվում է միայն առցանց, մինչև 4 Mb ծավալով՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

Ձև 4

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ[6]

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)

Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)

Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)

Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը

Կրթությունը (բուհ, մասնագիտություն)

Գիտական աստիճանը

Վերջին թեզի ծածկագիրը,
պաշտպանության տարեթիվն ու վայրը

Հրատարակված

- գիտական հոդվածների թիվը
- մենագրությունների թիվը

Արտոնագրերի թիվը

Լիցենզիաների թիվը

Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1.

2.

Ստացված արտերկրյա դրամաշնորհները

[6] Ներկայացվում է միայն առցանց:

Form 4a

INFORMATION ON THE PROJECT COORDINATOR[7]

1. Full Name (Last, First, Patronymic) _____
   (In Armenian, Russian, English)
2. Date of Birth (Day/Month/Year) _____
3. Education (Univerisity, speciality) _____
4. Degree _____
5. Affiliation, Position _____
6. Publications
   - Articles (number) _____
   - Monographs (number) _____
7. Patents (number) _____
8. Licenses (number) _____
9. Articles published within the last 5 years (authors, title, journal, year, volume, pages)
   1) _____
   2) _____
   (Add lines if necessary)
10. Foreign grants
    1) _____
    2) _____
    (Add lines if necessary)

[7] Ներկայացվում է միայն առցանց:

Ձև 5

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ[8]

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)

Ազգանուն, անուն, հայրանուն
(անգլերեն)

Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)

Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը

Կրթությունը (բուհ, մասնագիտություն)

Գիտական աստիճանը

Վերջին թեզի ծածկագիրը,
պաշտպանության տարեթիվն ու վայրը

Աշխատանքի վայրը, պաշտոնը

Հեռախոս

Էլեկտրոնային հասցե

Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի

1.

2.

[8] Ներկայացվում է միայն առցանց, յուրաքանչյուր կատարողի համար:

Form 5a

INFORMATION ON THE TEAM MEMBERS[9]

Full Name (Last, First, Patronymic)

Date of Birth (Day/Month/Year)

Education (Univerisity, speciality)

Degree

Affiliation, Position

Telephone

E-mail:

List up to 5 articles related to the project (authors, title, journal, year, volume, pages)

1.

2.

[9] Ներկայացվում է միայն առցանց, յուրաքանչյուր կատարողի համար:

Ձև 6

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ[10]

Հայտի ծածկագիրը _____

(*լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում*)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)									
	2013			**2014**			**2015**		
ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակը	պահանջվող գումարը	ամսական	ամիսների քանակը	պահանջվող գումարը	ամսական	ամիսների քանակը	պահանջվող գումարը
1)									
2)									
3)									
4)									
5)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)	2013	2014	2015
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)	2013	2014	2015
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			

3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ)

Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար

	2013			2014			2015		
Ազգանուն, անուն, հայրանուն	օրավարձը	օրերի քանակը	պահանջվող գումարը	օրավարձը	օրերի քանակը	պահանջվող գումարը	օրավարձը	օրերի քանակը	պահանջվող գումարը
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ			
Թվարկել 50000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել	2013	2014	2015
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			

Հայտի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝_____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

[10] Ներկայացվում է և՛ առցանց, և՛ տպագիր (ստորագրված) տարբերակով:

Form 6a

PROJECT BUDGET[11]

Individual Financial Support (full-time) (including taxes, AMD)									
	2013			**2014**			**2015**		
Full Name *(First, Family, Patronymic)*	Mothly Rate	Number of Months	Requested	Mothly Rate	Number of Months	Requested	Mothly Rate	Number of Months	Requested
1)									
2)									
3)									
4)									
5)									
TOTAL INDIVIDUAL FINANCIAL SUPPORT									

OTHER, including

1. Equipments and Materials (*Please list. All items over 100000 AMD must be justified in the Budget Narrative.*)	2013	2014	2015
1)			
2)			
TOTAL EQUIPMENTS AND MATERIALS			

2. Travel (***Please describe in Budget Narrative.***)	2013	2014	2015
1) Domestic Transportation			
2) Domestic Per Diem			
3) Domestic Accommodation			
4) International Transportation			
5) International Per Diem			
6) International Accommodation			
7) Other Travel Expenses (visa fees, conference registration fees, etc)			
TOTAL TRAVEL			

3. SECONDARY COLLABORATION (*All secondary collaborating institutions and individuals must be identified and secondary collaborators described in detail in the Budget Narrative.*)

Secondary Collaboration Individual Financial Support									
	2013			2014			2015		
Full Name *(First, Family, Patronymic)*	Daily Rate	Tays per Month	Requested	Daily Rate	Tays per Month	Requested	Daily Rate	Tays per Month	Requested
1)									
2)									
TOTAL SECONDARY COLLABORATION INDIVIDUAL FINANCIAL SUPPORT									

Secondary Collaboration: Materials and Services (*Please list. All items over50000 AMD must be justified in the Budget Narrative.*)	2013	2014	2015
1)			
2)			
TOTAL SECONDARY COLLABORATION MATERIALS AND SERVICES			
OVERHEAD CHARGES			
TOTAL REQUESTED			

[11] Ներկայացվում է միայն առցանց:

Ձև 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ[12]

[12] Ներկայացվում է միայն առցանց:

Form 7a

BUDGET NARRATIVE[13]

[13] Ներկայացվում է միայն առցանց:

Ձև 8

ՄԻՆՉԵՎ 3 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ[14]

hh	ազգանուն անուն հայրանուն
1.	
2.	
3.	

[14] Ներկայացվում է միայն առցանց: Նշվում են մինչև երեք գիտնականներ, որոնց հետ առկա է շահերի բախում:

Հավելված 3
գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Ձեզ է ներկայացվում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու « _____ » վերնագրով նախագիծը:

Առդիր՝

- հայտի տիտղոսաթերթը,
- հայտի ֆինանսական նախահաշիվը,
- գիտական թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության գիտական խորհրդի երաշխավորությունը,
- ղեկավարի անձնագրի պատճենը (անհատական նախաձեռնությամբ ներկայացնելու դեպքում),
- խմբի մինչև 35 տարեկան անդամի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2013 թ.